III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: *ՄԿԾ-երը համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:*

Մասնաճյուղն իր զարգացման 2016-2020թթ. ռազմավարական ծրագրով պլանավորել է ապահովել որակյալ կրթություն՝ ուսանողներին առաջարկելով աշխատաշուկայի արդի պահանջներին համահունչ և համակողմանի գիտելիք, կարողություններ և հմտություններ ապահովող կրթական ծրագրեր, դրանց իրականացման համար ձևավորել ժամանակակից համալսարանական ենթակառուցվածքներ և բարենպաստ միջավայր, զարգացնել մասնաճյուղի ընդունելության մարքեթինգային գործընթացները և այն համապատասխանեցնել երկրի, առավելապես տարածաշրջանի զարգացման կարիքներին, հանրության և աշխատաշուկայի պահանջներին, խթանել մասնաճյուղի միջազգայնացման գործընթացը՝ վերակառուցելով կրթական ծրագրերը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը համահունչ են առաքելությանը, համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին, մանրամասն նկարագրված են՝ ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների:

Մասնաճյուղի **4** ֆակուլտետներում և հեռակա ուսուցման բաժնում միայն 2019-20 ուս-տարում իրականացվում են բակալավրի *17 կրթական ծրագրեր*: Տարածաշրջանում գործունեու-թյան մի շարք տիրույթների համար, ինչպիսիք են հասարակական և բնական գիտությունները, կրթությունը և մանկավարժությունը, մշակույթը և արվեստը, մասնաճյուղն իր կրթական ծրագրերով ապահովում է համապատասխան որակավորում ունեցող մրցունակ մասնագետնե-րով: Հետևաբար, իր առաքելությանը համահունչ կրթական ծրագրեր իրականացնելու համար մասնաճյուղն ուսումնասիրում է տարածաշրջանի աշխատաշուկան, որը ներառում է մարզի դպրոցների համակարգը, բանկային ցանցը, տեղական ինքնակառավարման մարմինները, մասնավոր բիզնեսը, տուրիստական և սպասարկման ոլորտը և այլն: Նման ուսումնասիրու-թյունների արդյունքում **(Հավելված 3.1.2.ա)** մասնաճյուղում ներդրվել են պահանջարկ ունեցող մի շարք կրթական ծրագրեր, դրանցից մի քանիսի ներդրումն արդարացվել է՝ հիմք դիմորդների թվի կայունությունը և որոշ դեպքերում նաև աճը (**Հավելված 3.1.2.բ**):

Մասնաճյուղի զարգացման 2016-2020թթ. ռազմավարական ծրագրով պլանավորվել է իրականացնել գործող կրթական ծրագրերի վերանայում՝ որակավորումների ազգային շրջանակին և աշխատաշուկայի պահանջներին համահունչ (ՌԾ, Խնդիր 1.1.): Այդ նպատակով մասնաճյուղում 2016-17թ.-ին կազմակերպվել են «Մասնագիտության կրթական ծրագրերի մշակում» թեմայով դասընթացներ, 2016թ.-ից մասնաճյուղում ներդրվել է «կրթական ծրագրի ղեկավարի» նոր մոդելը (**Հրաման՝ թիվ 70, 26.04.2016թ., թիվ 128/132, 01.09.2016թ.),** 2017թ.-ին սկսվել է կրթական ծրագրերի վերամշակման և հաստատման գործընթացը **(հիմք՝ ԵՊՀ ռեկտորի թիվ 172/13 հրամանը, 04.10.17թ.**): Մասնաճյուղում ստեղծվել է բակալավրի կրթական ծրագրերի վերամշակումն արտոնող հանձնաժողով (**Հրաման թիվ 240/3, 13.10.2017թ.**): 2017-2018թթ. ընթացքում ստեղծվել են կրթական ծրագրերի վերամշակումն իրականացնող 12 աշխատան-քային խմբեր (**հրաման թիվ 264/8-17, 31.10.2017թ., հրաման թիվ 25/9, 13.02.2020թ.**): Աշխատանքային խմբերում ակտիվորեն աշխատել և աշխատում են նաև արտաքին շահակիցներ և ուսանողներ:

Նշված բոլոր խմբերն ըստ հաստատված ժամանակացույցի (**հրաման թիվ 240/4, 13.10.2017թ.)** պարբերաբար աշխատել են մասնաճյուղի Մասնագիտական կրթության որակի ապահովման

բաժնի մասնագետների և Ուսումնամեթոդական վարչության ներկայացուցիչների հետ: Նրանք գործող կրթական ծրագրերը վերանայել են «ԵՊՀ բակալավրի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը» (հաստատված՝ **ԵՊՀ ԳԽ 4.05.2017թ., ԵՊՀ ԻՄ ԳԽ 10.06.2017թ.**), «ԵՊՀ կրթական ծրագրերի մշակման մեթոդական ուղենիշերը» (հաստատված՝ **ԵՊՀ ԳԽ 28.10.2010թ.**) և «ՀՀ որակավորումների ազգային շրջանակը» (հաստատված՝ **ՀՀ կառավարություն, հրաման թիվ 714-Ն, 7.07.2016թ.**) չափորոշիչ փաստաթղթերի պահանջներին և դրույթներին համապատասխան (հիմք՝ **կամայական կրթական ծրագիր**): Խմբերն ուսումնասիրել են Ռուսաստանի Դաշնության պետական չափորոշիչները, հայաստանյան և եվրոպական առաջատար մի շարք բուհերի կրթական ծրագրերը: Ուսումնասիրությունների և ԵՊՀ հապատասխան մասնագիտությունների կրթական ծրագրերի հիման վրա նախ կազմվել են կրթական ծրագրերի առաջարկի հայտերը, ապա կրթական ծրագրերն արտոնող հանձնաժո-ղովի թույլտվությամբ անցել են ծրագրի փաստաթղթային փաթեթի կազմմանը (հիմք՝ **արտոնող հանձնաժողովի արձանագրությունները. 09.12.2017թ., 08.12.2018թ.**): Կազմվել են կրթության ժամանակակից պահանջներին, որակավորումների ազգային շրջանակի հետ համադրելի, կրթական վերջնարդյունքներով ձևակերպված և դասավանդման, ուսումնառության և հետազոտության փոխկապակցման ժամանակակից մոտեցումներով կրթական ծրագրեր: 11 կրթական ծրագրերը ըստ ԵՊՀ կրթական ծրագրերի հաստատման կարգի և մասնաճյուղի համապատասխան ժամանակացույցի անցել են արտաքին փորձաքննություն ԵՊՀ համապա-տասխան ֆակուլտետներում, Գյումրու տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնում, Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում: Արտաքին փորձագետների դրական կարծիքների հիման վրա այդ կրթական ծրագրերը հաստատվել են մասնաճյուղի գիտական խորհրդում (**ԵՊՀ ԻՄ ԳԽ, 01.06.2019թ. էջ 22, 29.06.2019թ. էջ 24, 22.02.2020թ. էջ 9**):

2019թ. հոկտեմբերից մասնաճյուղում սկսված է «Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» հեռակա և «Տնտեսական քաղաքականություն և իրավունք» առկա ուսուցմամբ երկու մագիստրոսական կրթական ծրագրերի հաստատման գործընթացը, որոնց առաջարկի հայտերն արդեն հաստատված են (**12.12.2019թ.**): Առաջին մագիստրոսական ծրագիրը հնարավորություն կտա մասնաճյուղի վերջին տարիների շրջանավարտներին ձեռք բերել ուսուցչի որակավորում և բավարարել մարզի դպրոցներում տարեցտարի ավելացող ուսուցիչների պահանջարկը: 2020-21 ուստարում կիրականացվի այդ ծրագրով ընդունելություն:

Բոլոր կրթական ծրագրերը միտված են մասնաճյուղի առաքելությամբ նախանշված նպատակների իրականացմանը, և իրենց կառուցվածքում և բովանդակությամբ ներառում են մասնաճյուղի առաքելության հիմնական տարրերը: Այսինքն, յուրաքանչյուր կրթական ծրագրում հստակ նշված են ծրագրի շրջանավարտների գործունեության մասնագիտական ոլորտները, տիրույթները և զբաղեցվող պաշտոնները, շնորհվող որակավորումները և ձեռքբերվող կրթական արդյունքները, դասավանդման և ուսումնառության մոտեցումները: Յուրաքանչյուր կրթական ծրագրի կարևոր բաղադրիչներն են.

- ✓ **ուսումնական պլանը**, որը ներկայացնում է ուսանողների ECTS կրեդիտներով արտահայտված բեռնվածությունը (ԵՊՀ ԻՄ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգ՝ **ԳԽ 10.06.2017թ.**),
- ✓ **ուսումնական մոդուլների նկարագրիչները**,
- ✓ **ուսումնական պլանի քարտեզը**,
- ✓ ծրագրի շրջանավարտների **ապագա զբաղվածության** հնարավորությունները, որոնք ներառում են տարածաշրջանի աշխատաշուկան:

Այսպիսով, կրթական ծրագրերում այս բաժինների և մնացած բաժինների առկայությունն ապահովում է նրանցում նշված ուսումնառության ակնկալվող արդյունքների համահունչությունը հաստատության առաքելության հետ:

Կրթական ծրագրերն իրականացվում են յուրաքանչյուր ոլորտի առաջատար, բարձրա-կարգ դասախոսական կազմով. մասնաճյուղն իր կրթական ծրագրերի արդյունավետ իրակա-նացման համար հրավիրում է ԵՊՀ և ՀՀ այլ առաջատար բուհերի համապատասխան կադրեր:

Կրթական ծրագրերի վերաբերյալ ամբողջ տեղեկատվությունը տեղադրվում է մասնաճյուղի պաշտոնական կայքում. կրթական ծրագրերի ցանկը, կրթական ծրագրերի վերջնարդյունքները, ֆակուլտետներում իրականացվող բակալավրի կրթական ծրագրերն ըստ վերջին 4 ուստարիների (ԲԳՖ, ՀԳՖ, ՏԳՖ, ԿԱՖ):

Կրթական ծրագրերի աշխատանքային խմբերը բակալավրի կրթական մակարդակին համապատասխան անհրաժեշտ **ակնկալվող վերջնարդյունքները** ձևակերպելուց հիմք են ընդունել ***Որակավորումների ազգային շրջանակի*** պահանջները, կրթական ծրագրից մասնաճյուղի ակնկալիքները և տարածաշրջանի աշխատաշուկայի առանձնահատկություն-ները: Հետևաբար, ՈԱՇ-ում սահմանված գիտելիքներին, հմտություններին և կարողունակու-թյուններին համադրելի կրթական վերջնարդյունքները մասնաճյուղի կրթական ծրագրերում ամրագրված են համապատասխան կոմպետենտություններում, իսկ դրանց ձևավորումն ապահովում են ծրագրի դասընթացները: Մասնաճյուղում 2014թ.-ից հաջողությամբ ներդրված են դասընթացների փաթեթները (պորտֆոլիոները), որոնցում մանրամասն ներկայացված են դասընթացի ավարտին ուսանողի կողմից ձեռքբերվելիք կրթական վերջնարդյունքները, դրանց ձևավորմանն աջակցող դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդները:

Որակավորումների ազգային շրջանակի հետ մասնաճյուղի կրթական ծրագրերի համադրելիությունը ներկայացված է «Ֆինանսներ», «Պատմություն», «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» կրթական ծրագրերի օրինակով:

Կազմակերպությունների ցանկը, որոնց օրինակով մասնաճյուղը կատարել է մասնագիտությունների կրթական ծրագրերի առաջավոր փորձի համեմատական վերլուծություն (բենչմարքինգ) ներկայացված է ***Հավելված 3.1.1-ում:***

ՉԱՓՈՐՈՇԻՉ բ. ՄՈՒՀ-ն ունի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդ-ների ընտրության քաղաքականություն, որը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը:

Հավելված 3.2.1-ում ներկայացված են մասնաճյուղի «Պատմություն», «Ֆինանսներ (ըստ ոլորտի)», «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդները, դասընթացների և ուսումնառության ակնկալվող արդյունքների (ՈՒԱ) համապատասխանությունը:

Դասավանդման և ուսումնառության մեթոդների արդիականացման գործընթացը կազմում է մասնաճյուղի ռազմավարական պլանավորման կարևոր խնդիրներից մեկը (***ՌԾ, գործ. 1.2.2, 1.2.4***): Մինչև 2017թ.-ը այդ մեթոդները ներկայացված էին յուրաքանչյուր մասնագիտության կրթական ծրագրի կրթական վերջնարդյունքների հետ, իսկ հետո կրթական ծրագրի մասնագրի (**04.10.2017թ., ԵՊՀ, հրաման թիվ 172/13**) նոր կառուցվածքի պահանջներին համապատասխան նրանք կրթական ծրագրում ամրագրված են յուրաքանչյուր դասընթացի/մոդուլի կրթական վերջնարդյունքներին:

Մասնաճյուղն ունի դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության գործող քաղաքականություն (**26.11.2016**), որն ապահովում է ուսումնառության վերջնարդյունքների

ձևավորմանը միտված մոտեցումներ: Դասախոսները մեթոդների ընտրության ժամանակ հաշվի են առնում նաև «ԵՊՀ կրթական ծրագրերի մշակման մեթոդական ուղենիշներում» տրված դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության մոտեցումները, դասական մեթոդների փորձը, ուսումնասիրում և կիրառում են մասնաճյուղում և այլ առաջատար բուհերում կիրառվող ժամանակակից փորձված, բարեփոխումներին համահունչ, տեղեկատվական լայն միջոցների ներառմամբ մեթոդներ, օգտվում հասանելի դարձվող տարատեսակ ուղեցույցներից (տեղադրված են մասնաճյուղի կայքում):

Դասախոսի կողմից պլանավորված և ուսումնառության արդյունքներին համապատասխան ընտրված դասավանդման և ուսումնառության մեթոդներն ավելի մանրամասն, ընդգրկուն, նաև ըստ յուրաքանչյուր թեմայի, ներկայացվում են մասնաճյուղում 2014թ.-ից ներդրված **դասընթացների փաթեթներում** (պորտֆոլիոներում): Փաթեթների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ մասնաճյուղի դասախոսները կիրառում են դասական ձևերից՝ դասախոսություններ, գործնական և սեմինար պարապմունքներ, լաբորատոր աշխատանքներ, որոնք գրեթե բոլորն իրենց մեջ ներառում են նյութի մատուցման համակարգչային ներկայացումների մեխանիզմը, գիտելիքի ամրագրման համար՝ ինքնուրույն աշխատանքներ, անհատական առաջադրանքներ, ռեֆերատներ, էսսեներ, ստեղծագործական մտքի զարգացման համար՝ պրակտիկաներ, կուրսային աշխատանքներ, գիտական զեկուցումներ և խմբային քննարկումներ, կառուցողական և համագործակցային կարողությունների զարգացման համար՝ ճանաչողական-ստեղծագործական խաղեր, դերային խաղեր, բանավեճեր, խմբային աշխատանքներ, փաստաթղթերի հետ աշխատանք, իրական օրինակների, թեմատիկ շնորհանդեսների և տարբեր առաջադրանքների քննարկումների ու վերլուծությունների միջոցով թեմաների հեշտ յուրացումն ապահովող բազմազան մեթոդներ և այլն:

Հավելված 3.2.2-ում ներկայացված է ՀՀ և արտասահմանյան բուհերում ու մասնաճյուղում կիրառվող դասավանդման և ուսումնառության մեթոդների համեմատությունը: Ընտրված 3 կրթական ծրագրերի («Պատմություն», «Ֆինանսներ (ըստ ոլորտի)», «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա») վրա կատարված համեմատությունները ցույց են տալիս, որ ներկայացվող բուհերի կրթական ծրագրերում դասավանդման և ուսումնառության մեթոդները հիմնականում նույնն են և գրեթե համահունչ են, ինչը թույլ է տալիս հաստատել, որ մասնաճյուղում կիրառվում են հայաստանյան և արտասահմանյան բուհերում կրթական ծրագրերի արդյունավետ իրականացման համար ընդունված դասավանդման և ուսումնառության մեթոդներ:

Կիրառվող մեթոդները դասախոսների կողմից վերանայվում են մասնաճյուղում դրանց արդյունավետության գնահատման մի շարք մեխանիզմներով հավաքագրված արդյունքների հիման վրա (հարցումներ, հանդիպում-քննարկումներ, դասալսումներ):

Առաջին հերթին վերանայման համար հիմք են հանդիսանում տվյալ դասընթացի ավարտին ուսանողների և դասախոսի փոխադարձ համագործակցությամբ ձեռք բերված արդյունքները:

Ապա ներքին և արտաքին շահակիցների շրջանում իրականացվող ուսումնասիրությունները, որոնց արդյունքներն **ուղղակի և անուղղակի** ձևով գնահատում են դասախոսների կողմից կիրառվող դասավանդման և ուսումնառության մեթոդների արդյունավետությունը: Այդ հարցումներից են.

1. 2010թ.-ից իրականացվող դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական կիսամյակային հարցումները (**27.01.2017թ.**): Այդ հարցումների վերջին 5 տարիների արդյունքների մշակումները (***ԳԱՅ 2014-19, ցուցանիշ 2.15/էջ 38***) ցույց են տվել, որ ուսանողները բարձր են գնահատում դասախոսների կողմից նյութի մատուցման

հասկանալի և մատչելի մեթոդների կիրառումը, ինքնուրույն աշխատանքների միջոցով ուսանողների վերլուծական և քննադատական մտածողությունը խթանելու և ամրապնդելու դասախոսների ջանքերը: Հարկ է նշել, որ վերջին 5 ուստարիների համար ֆակուլտետների միջին գնահատականն էապես բարելավվել է (**4.6-ից՝ 4.8):**

2. 2011թ.-ից անցկացվող մասնաճյուղում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ ամենամյա հարցումները (**26.12.2017թ.**): 2018-19 ուստարվա հարցման արդյունքների ամփոփումը (**էջ 3**) վերջին 3 ուստարիների համար վկայում է, որ մեր շրջանավարտ-ները բավարարված են իրենց ստացած տեսական գիտելիքներից (միջին գնահատականը՝ **4.51, 4.61, 4.71**), ձեռք բերած մասնագիտական կարողություններից (**4.52, 4.49, 4.56**), սակայն ձեռքբերած գործնական հմտություններից բավարարված են մասնակի (**4.26, 4.28, 4.08**):
3. 2012-13 ուստարվանից իրականացվող մասնաճյուղի շրջանավարտների վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիքի ուսումնասիրության հարցումը (**18.04.2015թ.,** 2017թ.-ից՝ առցանց): Այդ հարցման արդյունքները վերջին 3 տարիների համար հետևյալն են. մասնագիտական պատրաստվածությունը՝ **3.9, 4.1, 4.0 (էջ 1)**, տեսական գիտելիքների իմացությունը՝ **3.8, 4.1, 4.03 (էջ 1)**, իսկ գործնական հմտությունները ցավոք՝ **3.7, 3.9, 3.1 (էջ 1)**, այս արդյունքները փաստում են ուսումնառության գործընթացում առկա թերացումների կամ այդ գործընթացի ոչ արդյունավետ իրականացման մասին:
4. 2012-13 ուստարվանից իրականացվող մասնաճյուղի պրակտիկանտ-ուսանողների վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիքի ուսումնասիրության հարցումը: 2017-18 ուստարվա արդյունքներով (**էջ 3**) պրակտիկանտների դասավանդման ժամանակակից մեթոդներին տիրապետելու կարողությունները բարձր են գնահատել հարցմանը մասնակցած արտաքին շահակիցների **75,8%-ը**, տեղեկատվական տեխնոլոգիաներին տիրապետելու մակարդակը՝ **81,8%-ը**: Վերջին 3 ուստարիների արդյունքները բավականին բարձր են (համապատասխանաբար՝ **4.5, 4.6, 4.1** և **4.9, 4.7, 4.4**), ինչը վկայում է մասնաճյուղում դասավանդման և ուսումնառության մեթոդների արդիականացման և նրանց արդյունավետության բարձրացման մասին:

Հաշվի առնելով այն փաստը, որ և՛ ուսանողները, և՛ արտաքին շահակիցները հիմնականում բավարարված չեն ուսանողների գործնական հմտություններից և կարողություններից, մասնաճյուղը պարբերաբար նոր ուղիներ է փնտրում այն բարելավելու ուղղությամբ: Մասնավորապես, ուսանողների համար ուսումնառությանը զուգահեռ կազմակերպվում են տարբեր պրակտիկաներ, դասընթացներ, սեմինարներ, ճանաչողական այցեր:

Օրինակ, մասնաճյուղն ակտիվ համագործակցում է Դիլիջանի կենտրոնական բանկի ուսումնագիտական կենտրոնի հետ և վերջին տարիներին «Ֆինանսներ» կրթական ծրագրի ուսանողները մրցութային կարգով իրենց արտադրական պրակտիկաներն անց են կացնում այնտեղ: «Մանկավարժություն և հոգեբանություն» մասնագիտության ուսանողներն ակտիվ պրակտիկա են անցնում SOS մանկական գյուղեր ծրագրի Իջևանի կենտրոնում, «Հույսի կամուրջ» ՀԿ-ում: Հումանիտար գիտությունների ֆակուլտետի ուսանողներն օտարալեզու հյուրերի հետ հանդիպումների ժամանակ ներգրավվում են որպես թարգմանիչներ: 2015թ.-ից «Զբոսաշրջություն» կրթական ծրագրի իրականացման շրջանակներում մասնաճյուղը համագործակցում է «Տավուշի մարզի տուրիզմի զարգացման գործակալություն» ՀԿ-ի հետ: Համագործակցության շրջանակներում «Զբոսաշրջություն» ծրագրի ուսանողները մասնակցում են սեմինարների, պրակտիկ աշխատանքների: «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» կրթական ծրագրի

ուսանողների գրեթե 50%-ը մասնակցում է Գյումրու տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի և “GG” ծրագրավորման և “Synergi International Systems” ընկերությունների կողմից վերջին երկու տարինե-րին ապագա ծրագրավորողների համար իրականացվող մասնագիտական դասընթացներին:

5. ավարտական կուրսերի ուսանողների հետ իրականացվող հանդիպումները՝ ընթացքում և ամփոփիչ ատեստավորման քննություններից հետո: **2018-19թթ. ուստարում** մասնաճյուղի 11 մասնագիտությունների ավարտական կուրսերի ուսանողների հետ հանդիպումների ժամանակ քննարկվել են մասնագիտության կրթական ծրագրով սահմանված վերջնարդյունքներին իրենց մասնագիտական կարողությունների և ձեռբերումների համապատասխանության վերաբերյալ հարցեր: Ընդ որում նրանք փաստել են, որ իրենց կուրսերի ուսանողների 80%-ը նշված վերջնարդյունքները ձեռք են բերել:
6. մասնաճյուղում պարբերաբար իրականացվող **կանոնակարգված** բաց և ցուցադրական դասերը, պլանավորված և չպլանավորված դասալսումները, փոխադարձ դասալսումները (**17.10.2014թ.**): Դրանք դասախոսներին տրամադրում են անհրաժեշտ մասնագիտական և մեթոդական օգնություն, տարածում դասավանդման լավագույն փորձը: Դասալսումների արդյունքները քննարկվում են ամբիոնի նիստերում, լավագույն մեթոդները դասընթացների միջոցով ներկայացվում են մասնաճյուղի ողջ դասախոսական անձնակազմին, մասնավորապես, 2014թ.-ին ստեղծված «Դասավանդման առաջավոր փորձի փոխանցման և երիտասարդ դասախոսների աջակցման» կենտրոնի միջոցով: Կենտրոնի միջոցով և «Կրեդիտային համակարգով դասախոսների որակավորման բարձրացման» 2017-21թթ. կրթագիտական ծրագրի (**11.02.2017թ.**) շրջանակներում մասնաճյուղի դասախոսները մասնակցել են վերապատրաստման մի շարք դասընթացների (ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հաշվետվությունը 2018-19 ուսումնական տարվա գործունեության մասին, էջ 6-7): Իսկ դասալսումների արդյունքների վերլուծությունները վկայում են, որ մեթոդական վերապատրաստումներ անցած դասախոսները բավականին լավ տիրապետում են դասի արդյունավետ վարման ժամանակակից մեթոդներին:

Չնայած ձեռքբերումներին և գործադրվող ջանքերին, մասնաճյուղում կան խնդիրներ, որոնք խոչընդոտում են դասավանդման արդյունավետության բարձրացմանը: Դրանցից են ավանդական դասախոսությունները, թույլ համագործակցությունը միևնույն առարկայի դասախոսություն և գործնական դասավանդող դասախոսների միջև: Ուսանողների ճանաչողական գործունեության ակտիվացման, պրոբլեմների առաջադրմամբ կոնկրետ իրավիճակների անալիզի, բանավեճային կամ երկխոսական, խաղային և մրցակցային, սխալների վրա աշխատելու, ուսանողների մասնագիտական խոսքի զարգացման մեթոդները կիրառվում են սահմանափակ թվով դասախոսների կողմից:

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ն ունի ուսանողների գնահատման քաղաքականություն՝ ըստ ուսումնառության արդյունքների, և ապահովում է ակադեմիական ազնվությունը:

Հավելված 3.3.1-ում ներկայացված են մասնաճյուղի «Պատմություն», «Ֆինանսներ (ըստ ոլորտի)», «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան գնահատման մեթոդները:

Մասնաճյուղը պլանավորել է ներդնել ուսանողների կրթական վերջնարդյունքների վրա հիմնված գնահատման ձևեր և մշակել ակադեմիական ազնվության և գրագողության դեմ պայքարի մեխանիզմներ *(ՌԾ, գործ. 1.2.3, 1.2.6, էջ 5):*

Մասնաճյուղում ուսանողների կողմից վերջնարդյունքների ձեռքբերումների գնահատումը ներառում է հետևյալ տարրերը. ընթացիկ առաջադիմության վերահսկում, միջանկյալ ստուգումներ, շրջանավարտների ավարտական պետական ատեստավորում: Ընթացիկ և միջանկյալ վերահսկ-ման կոնկրետ ձևերը և ընթացակարգերը որոշվում են ՀՀ կառավարության, ԵՊՀ և ԵՊՀ ԻՄ համա-պատասխան կարգերով: Մասնաճյուղում 2010թ.-ից ուսանողների գնահատման համար կիրառվում է ECTS կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգը *(10.06.2017թ., կետ 2, էջ 4):*

Մասնաճյուղում դասախոսների կողմից կիրառվող գնահատման մեթոդները ներկայացված են կրթական ծրագրերի դասընթացների նկարագրիչներում, իսկ ավելի մանրամասն՝ 2014թ.-ից մասնաճյուղում կիրառվող դասընթացների փաթեթներում (էջ 16): Փաթեթներում դասախոսները ներկայացնում են դասընթացի ակնկալվող վերջնարդյունքների համապատասխան գնահատման մեթոդները, չափանիշները, գնահատման ռազմավարությունը:

Մասնաճյուղում ուսանողների գնահատման մոտեցումները պարբերաբար վերանայվում ու արդիականացվում են: Դրանք պարբերաբար ուսումնասիրվում և համեմատվում են ՀՀ և արտասահմանյան առաջատար բուհերում կիրառվող գնահատման ձևերի և մեթոդների հետ: «Պատմություն», «Ֆինանսներ (ըստ ոլորտի)», «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» երեք կրթական ծրագրերի օրինակով կատարված վերլուծությունները ցույց են տվել, որ մասնաճյուղի կրթական ծրագրերն ընդգրկում են կրթական վերջնարդյունքների գնահատմանն ուղղված, արդյունահեն և ընդունելի գնահատման մեթոդներ *(Հավելված 3.3.2):* Եվ գրեթե բոլոր բուհերում կիրառվում են ուսանողների ձեռքբերումների գնահատման նույն մոտեցումները.

1. գիտելիքների և իմացության գնահատման համար բանավոր հարցումներ, գործնական և տնային անհատական առաջադրանքներ, սեմինար պարապմունքներ, միջանկյալ գրավոր և բանավոր քննություններ, միջանկյալ ստուգումներ, եզրափակիչ բանավոր քննություններ, կուրսային և ավարտական աշխատանքների պաշտպանություն և այլն,
2. մասնագիտական կարողությունների գնահատման համար կիրառվում են գործնական, ստուգողական աշխատանքներ, թեստավորում, միջանկյալ գրավոր և բանավոր քննություններ, միջանկյալ ստուգումներ, եզրափակիչ բանավոր քննություններ, կուրսային և ավարտական աշխատանքների պաշտպանություն, պրակտիկայի հաշվետվություն և այլն,
3. ընդհանրական կարողությունների գնահատման համար կիրառվում են գործնական առաջադրանքներ, զեկուցումներ, ռեֆերատներ, նախագծեր, խմբային աշխատանքներ, օտարալեզու մասնագիտական գրականության ընթերցում, ուսումնական և արտադրական պրակտիկաներ, կուրսային և ավարտական աշխատանքների պաշտպանություն և այլն:

Մասնաճյուղի դասախոսները գնահատման մեթոդների ընտրության համար հաշվի են առնում «ԵՊՀ կրթական ծրագրերի մշակման մեթոդական ուղենիշներում» տրված գնահատման մեթոդների ընտրության մոտեցումները, գնահատման դասական մեթոդների փորձը, իսկ բարելավման համար դասախոսական և ուսանողական հարցումների արդյունքները, դասընթացի ավարտին ուսանողների ձեռքբերումների վերլուծությունները, կոլեգաների լավագույն փորձը: Այսինքն, գնահատման մեթոդները և մոտեցումները պարբերաբար վերանայվում և փոփոխվում են: Օրինակ, գնահատման գործընթացի բարելավման շրջանակներում ընթացիկ քննություններն սկսեցին անցկացվել գրավոր կամ բանավոր՝ նախկին թեստային քննությունների փոխարեն: Մասնաճյուղում քննարկումներ են եղել գնահատման համակարգում դասընթացին ուսանողի մասնակցության միավորի ներառման շուրջ և այն հանվել է, դա ամրագրված է գնահատման

համակարգի վերջին վերանայման մեջ, որն իրականացվել է ԵՊՀ-ի կողմից և ներկայացված է ԵՊՀ ԻՄ-ում բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգում *(կետ 3):*

Գնահատման մոտեցումների արդյունավետության գնահատման համար հիմք են հանդիսանում ԵՊՀ ԻՄ-ում 2013թ.-ից իրականացվող ***ուսանողների գնահատման վերաբերյալ ուսանողական և դասախոսական հարցումների արդյունքները:*** 2018թ.-ից գնահատման համակարգի վերաբերյալ հարցերը ներառված են մասնաճյուղից բավարարվածության առցանց իրականացվող դասախոսական և ուսանողական հարցումների մեջ: Այդ հարցումների արդյունքներով դասախոսները (էջ 2-3) և ուսանողները (էջ 4) գտնում են, որ մասնաճյուղում գործող բազմագործոն համակարգը մասամբ է բացահայտում ուսանողների ձեռք բերած գիտելիքները, գործնական հմտությունները և մասնագիտական կարողությունները (միջ. գն. ***3.4-4.4*)**, ընդ որում ուսանողների գնահատականներն ավելի բարձր են, քան դասախոսներինը: Այս արդյունքները ցույց են տալիս, որ մասնաճյուղում վերջին տարիներին դրանք բարելավվել են:

Օրինակ, ՄԿՈԱ բաժինն ուսումնասիրելով այլ առաջատար բուհերի գնահատման համակարգերը 2014թ.-ից առաջարկել և ներդրել է ուսումնառության արդյունքների գնահատման 3 նախագծեր *(էջեր 24-26),* որոնք ներառված են դասընթացների փաթեթներում և հաջողությամբ կիրառվում են դասախոսների կողմից:

Մասնաճյուղում ուսանողների ձեռք բերած գիտելիքների և մասնագիտական կարողությունների դրսևորման համար կարևոր են նրանց կողմից իրականացվող պրակտիկաները *(26.05.2018թ.,* կետ 4, էջ 4*),* կուրսային *(28.02.2012թ.,* կետ 3, էջ 5*)* և ավարտական *(14.02.2018թ.,* կետ 5, էջ 8*) աշխատանքներն ու նրանց գնահատումներն ըստ կանոնակարգերի:*

2018թ.-ից շրջանավարտների ամփոփիչ ատեստավորումն իրականացվում է միայն ավարտական աշխատանքի պաշտպանության արդյունքներով՝ նոր կարգով ամփոփիչ ավարտական քննությունները հանվել են (ՀՀ կրթության և գիտության նախարարի հրաման, 07.11.2017թ.): Ըստ կարգի, ուսանողի ամփոփիչ գնահատումը ներառում է ուսանողի ձեռքբերումների դրսևորման, թեմայի և նրա շրջանակներում նրա կողմից հավաքած տեղեկատվության հետազոտման, վերլուծության և դրանց մատուցման մակարդակների գնահատումը:

Ուսումնական, մասնագիտական և մանկավարժական պրակտիկա անցած ուսանողների հաշվետվություններով գնահատվում են նրանց ձեռք բերած մասնագիտական պրակտիկ հմտություններն ու կարողությունները:

Յուրաքանչյուր դասախոս իր դասընթացի շրջանակներում կիսամյակի սկզբում ուսանողներին ներկայացնում է իր փաթեթում ամրագրված գնահատման չափանիշները և ընթացակարգերը, իսկ ամբիոններն ապահովում են այդ փաթեթների հասանելիությունը ուսանողներին:

Մասնաճյուղում գնահատման կարգին ուսանողների տեղեկացված լինելն օգնում է ապահովել գնահատման ազնվությունն ու թափանցիկությունը: Ուսանողների գնահատման վերաբերյալ վերևում նշված դասախոսական և ուսանողական հարցումների արդյունքներով դասախոսները գտնում են *(էջ 5-6),* որ իրենց գնահատումներում ապահովում են օբյեկտիվություն (վերջին 3 հարցումներում միջին գնահատականը՝ ***4.4, 3.7, 4.3),*** իսկ ուսանողները (էջ 10-12) վերջին երկու տարիներին դժգոհ են օբյեկտիվությունից (3.5, 3.6), նույն իրավիճակն է գնահատման թափանցիկության և գրագողության բացառման հարցում: Իսկ ահա ավարտելուց հետո նրանք որպես շրջանավարտ *(էջ 8,9)* ընդհանուր առմամբ բավարարված են գնահատման օբյեկտիվությունից. վերջին 3 տարիներին միջին գնահատականը եղել է ***4.4, 4.3, 4.3:***

Մասնաճյուղում ուսանողների գնահատման գործընթացում կարևորվում է ակադեմիական ազնվության ապահովումը և գրագողության դեմ պայքարը, ինչը կազմում է մասնաճյուղի ռազմավարական պլանավորման կարևոր խնդիրներից մեկը (ՌԾ 2016-20թթ., կետ 4, Խնդիր 1.2): Մասնաճյուղում գործում է ակադեմիական ազնվության կարգ ***(ԵՊՀ ԻՄ ԳԽ, 26.12.2015թ.),*** որի կիրառելիության և հնարավոր փոփոխության վերաբերյալ մասնաճյուղում 2019թ.-ին ուսանողների և դասախոսների շրջանում կազմակերպվել են քննարկումներ, հավաքագրվել են առաջարկություններ, իսկ ՄԿՈԱ բաժնի կողմից մշակվել և ուսանողների ու դասախոսների քննարկմանն է ներկայացվել «Էթիկայի կանոնագիրքը», որը վերախմբագրվելուց հետո կներկայացվի մասնաճյուղի ԳԽ հաստատման:

Գրագողության դեմ պայքարելու համար 2018-19 ուստարուց մասնաճյուղում քննություններն անց են կացվում տեսասարքերով համալրված լսարաններում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ դ. ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը բովանդակային առումով համահունչ են նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին և նպաստում են ուսանողների ու դասավանդողների շարժունությանը, միջազգայնացմանը:

Միջազգային համատեղ կրթական ծրագրեր դեռևս չունենալու պատճառով մասնաճյուղը չունի ուսանողների և դասախոսների փոխանակումն ու շարժունությունն ապահովելու անմիջական համաձայնագրեր այլ ուսումնական հաստատությունների հետ: Մասնաճյուղի ներսում և Հանրապետության տարածքում շարժունությունը կարգավորվում է կրթության մասին օրենքով, միջբուհական շարժունությունը կարգավորող կարգով, բուհերի կանոնադրություններով, ՀՀ այլ օրենքներով, օրենսդրական ակտերով (Բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների ակադեմիական շարժունության կարգ, Միջի մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում համապատասխան մասնագիտությամբ կրթությունը շարունակելու կանոնակարգ):

Առաջնորդվելով ԵՊՀ-ի ուսումնառության նույն ծրագրերով, մասնաճյուղը կարող է օգտագոր-ծել մայր բուհի հնարավորությունները արտասահմանյան հաստատությունների հետ համագոր-ծակցելու համար՝ ինչը պլանավորվել է նրա ռազմավարությամբ (***ՌԾ, գործ. 9.2.3***), սակայն առայժմ այդ ուղղությամբ քայլեր չեն ձեռնարկվել: Հետևաբար, մասնաճյուղը բավականին խնդիրներ ունի այս ուղղությամբ, և անհրաժեշտ է ակտիվացնել գործունեությունն այս ասպարեզում:

Վերջին 5 ուստարիների համար մասնաճյուղ **ուսանողների ներհոսքի** հիմնական պատճառներն են. սոցիալական խնդիրները և բնակության վայրի փոփոխությունը (**29.2%**), մասնավոր բուհից պետական բուհ տեղափոխությունը (**4.38%**), երկրորդ մասնագիտական բարձրագույն կրթություն ստանալը (**5.11%**), ՄՄՈՒՀ-ի շրջանավարտների բարձրագույն մասնագի-տական կրթության ստանալը (**61.31%**): Իսկ մասնաճյուղից **արտահոսքի** հիմնական պատճառներն են. ամուսնության և բնակության վայրի փոփոխությունը (**87.5%**), մասնագիտության փոփոխությունը (**12.5%**): Այդ տվյալները և ուսումնական հաստատությունների ցանկը, որոնց հետ իրականացվել է ուսանողների փոխանակումներ ներկայացված են **Հավելված 3.4.1-ում**:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը 2013-14 ուստարվանից կիրառում է բակալավրի կրթական ծրագրեր, որոնց համար **հիմք են հանդիսացել** ԵՊՀ համապատասխան մասնագիտությունների բակալավրի կրթական ծրագրերը և նմանատիպ ծրագրեր իրականացնող ՀՀ, ՌԴ և եվրոպական տարբեր բուհերի կրթական ծրագրերը:

Մասնաճյուղի զարգացման 2016-2020թթ. ռազմավարական ծրագրով պլանավորվել է իրականացնել կրթական ծրագրերի վերանայում որակավորումների ազգային շրջանակին համահունչ (ՌԾ Խնդիր 1.1), 2017թ.-ից իրականացվել է գործող ծրագրերի վերանայում և նոր կրթական ծրագրերի կազմում (**տես չափորոշիչ ա**):

Կրթական ծրագրերը վերանայող աշխատանքային խմբերն այլ բուհերի կրթական ծրագրերի հետ պարբերաբար իրականացրել են անհրաժեշտ համեմատական վերլուծություններ: Մասնավորապես, ուսումնասիրվել և համեմատվել են մասնաճյուղի և այլ բուհերի կրթական ծրագրերի կառուցվածքը, կրթամասերի միջև կրեդիտների բաշխվածությունը, ծրագրի նպատակներն ու խնդիրները, ծրագրի ավարտին ձևավորվող կոմպետենցիաները, շրջանավարտների ապագա կարիերայի հնարավորությունները, դասընթացների ցանկը, նույնիսկ որոշ դասընթացների համար նաև թեմատիկ պլանները և այլն՝ նպատակ ունենալով կազմել ՀՀ, եվրոպական և ռուսաստանյան բուհերի համապատասխան կրթական ծրագրերի հետ համադրելի կրթական ծրագրեր:

Օրինակ, մասնաճյուղի կրթական ծրագրերն **իրենց կառուցվածքով** համադրելի են ԵՊՀ համապատասխան մասնագիտությունների կրթական ծրագրերի հետ, որովհետև կազմվել են «Կրթական ծրագրի մասնագրի և դասընթացի նկարագրիչների լրացման ուղեցույց»-ին (ԵՊՀ, **04.05.2017թ**.) համապատասխան, համադրելի են Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի (ՀՊՄՀ) և ՌԴ պետական չափորոշիչներով ռուսաստանյան բուհերի կրթական ծրագրերի կառուցվածքների հետ ***(Հավելված 3.4.2)***: Ներկայացված կառուցվածքային համեմատությունը թույլ է տալիս ասել, որ մասնաճյուղի կրթական ծրագրերի վրա դրվող պահանջները համահունչ են եվրոպական չափորոշիչների պահանջներին և նրանցում առանձնահատուկ տեղ է հատկացված ձեռք բերվող ***կրթական վերջնարդյունքներին***, նաև ***դասընթացների/մոդուլների նկարագրիչներին:***

ՌԴ պ/չ-ում և ՀՊՄՀ-ի կրթական ծրագրի կառուցվածքում հարկ է կարևորել բակալավրի կրթական ծրագրի իրականացման պայմանների վրա դրվող պահանջները և ծրագրի յուրացման որակի գնահատման չափանիշները: ԵՊՀ ԻՄ-ում այս երկու խնդիրները լուծվում են **դասընթացների շրջանակներում** և մանրամասն ներկայացված են յուրաքանչյուր դասընթացի փաթեթում: Իսկ ծրագրի յուրացման որակը գնահատվում է մասնաճյուղի շրջանավարտների վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիքի, դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողների կարծիքի, ուսումնառությունից շրջանավարտների բավարարվածության ուսումնասիրման և ավարտական կուրսերի հետ հանդիպում-քննարկումների միջոցով (**այդ արդյունքները լուսաբանված են կայքում**):

Օրինակ, **մոդուլային կառուցվածքով և մոդուլներում կրեդիտների բաշխվածությամբ** մասնաճյուղի կրթական ծրագրերը գրեթե չեն տարբերվում այլ բուհերի նմանատիպ կրթական ծրագրերից, դա հիմնավորված է ***Հավելված 3.4.3-ում*** «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» կրթական ծրագրի օրինակով: Համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ.

- ✓ ընդհանուր կրթական կառուցամսին հատկացված է 40-ից 44 կրեդիտ, որոնցից մասնաճյուղը կամընտրականով ներառում է 4 կրեդիտով և բաց թվարկված դասընթացներ, իսկ ռուսաստանյան բուհերը՝ 10-15 կրեդիտով առանց բաց ցանկի դասընթացներ,
- ✓ մասնագիտական կառուցամասին հատկացված է 196-200 կրեդիտ, որը համընկնում է ՌԴ պետական չափորոշիչների պահանջների հետ, ուղղակի նորից պետք է փաստել, որ ռուսաստանյան բուհերում ավելի մեծ ուշադրություն է դարձվում ուսանողների

նախասիրություններին և նրանցում մասնագիտական կամընտրական դասընթացների ծավալին՝ 60-70 կրեդիտ (մասնաճյուղինը՝ 12 կրեդիտ),

- ✓ կրթական այլ մոդուլներին մասնաճյուղի կրթական ծրագրերում հատկացված է 30-ից 40 կրեդիտ, ռուսաստանյան բուհերում՝ 24 կրեդիտ: Այստեղ կարևոր է նշել ակնհայտ երևացող մոտեցումները. մասնաճյուղում ավարտական աշխատանքների պատրաստման և պաշտպա-նության համար հատկացվում է 20 կրեդիտ, ռուսաստանյան չափորոշիչներով՝ 9 (պետական քննություն՝ 3, ավարտական աշխատանք՝ 6), ընդ որում համալսարանում 2017-18 ուստարուց սկսած հանված է պետական ամփոփիչ քննությունը և շեշտը դրվել է ուսանողների ինքնուրույն, հետազոտական աշխատանք կատարելու վրա:

Այստեղ կարևոր է փաստել, որ օրինակ Մ.Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանում նշված ծրագրի իրականացման համար ավելի շատ կրեդիտներ հատկացվում են կամընտրական, կամ ուղղակի ուսանողների կողմից ընտրվող դասընթացներին, ինչը մեծ և հզոր բուհը կարող է իրականացնել, իսկ մասնաճյուղի կրթական ծրագրերում բացահայտ ներկայացվում են առաջարկվող կամընտրական դասընթացները, որովհետև կուրսերում ուսանողները քիչ են, դասախոսական հիմնական կազմը ձևավորվում է ԵՊՀ-ից և այլ բուհերից հրավիրված բարձրակարգ մասնագետներով, որոնք կողմնորոշված են կրթական ծրագրի պարտադիր կառուցամասի իրականացմանը: Չնայած հարկ է նշել, որ մասնաճյուղի կրթական ծրագրերում ներառվում են կամընտրական այնպիսի դասընթացներ, որոնք ապահովում են ապագա շրջանավարտի նեղ մասնագիտական ուղղվածությունը տարածաշրջանի աշխատաշուկայի պահանջներին համապատասխան, ինչպես օրինակ՝ ֆինանսներ ըստ ոլորտի, Web-ծրագրավորում, ժուռնալիստիկայի տարրեր, Տավուշի մարզի բնական և պատմաճարտարապետական հուշարձանների ուսումնասիրություն, հագուստի մոդելավորում, զարդարվեստ և այլն:

Մասնաճյուղի երեք կրթական ծրագրերի օրինակով իրականացվել են համեմատական վերլուծություններ ըստ ծրագրում ներառված **դասընթացների ցանկի և նրանց հատկացված կրեդիտների**՝ «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա», «Պատմություն» և «Ֆինանսներ (ըստ ոլորտի)»: Համեմատումներն իրականացվել են Մ.Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանի, Նովոսիբիրսկի պետական համալսարանի և Կուբանի պետական համալսարանի համապատասխան կրթական ծրագրերի միջև: Այդ վերլուծությունը թույլ է տալիս ասել, որ ներկայացված կրթական ծրագրերի մեջ առկա է բովանդակային համադրելիություն, նրանց մասնագիտական պարտադիր կառուցամասերը գրեթե 80%-ով համադրելի են:

Օրինակ, պետք է փաստել, որ **շրջանավարտների ապագա կարիերայի** առումով նույնանուն կրթական ծրագրերի համար մասնագիտական գործունեության տիրույթները գրեթե համապատասխան են *(«Ֆինանսներ (ըստ ոլորտի)» կրթական ծրագրի օրինակով)*: Մասնաճյուղի «Ֆինանսներ» և ՌԴ պ/չ «Էկոնոմիկա» կրթական ծրագրի շրջանավարտների գործունեության տիրույթներն են տնտեսության տարբեր ոլորտների ձեռնարկությունները, առևտրային բանկերը, խորհրդատվական ընկերությունները, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները և այլն:

Ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ մեր կրթական ծրագրերն ապահովում են տվյալ մասնագիտության համար միջազգային և ազգային հնարավոր տիրույթները: Իսկ մասնաճյուղն իր առաջ խնդիր է դրել խթանել ուսանողների կարիերայի ծառայությունները՝ զարգացնելով լրացուցիչ պրակտիկայի (ինտերնշիփ), խորհրդատվության և ուսուցողական դասընթացների համակարգը (*ՌԾ, գործ.6.1.6*):

Այս վերլուծությունների արդյունքները վկայում են մասնաճյուղի կրթական ծրագրերի բովանդակային հուսալիության մասին, և քանի որ համադրելի են այլ առաջատար բուհերի համապատասխան կրթական ծրագրերի հետ գրեթե բոլոր տեսանկյուններից, հետևաբար լեզվական հարցերը լուծելու դեպքում հնարավոր կլինի ապահովել մեր ուսանողների շարժունությունը:

Մասնաճյուղը տարածաշրջանի գործատուների շրջանում պարբերաբար ուսումնասիրություններ է կատարում մասնաճյուղի շրջանավարտների պահանջվածության, նրանց մասնագիտական որակների վերաբերյալ: 2019թ.-ի հարցմանը մասնակցած 50 գործատուների 94.6%-ն իր մերձավորներին և ընկերներին խորհուրդ կտա ընդունվել ԵՊՀ ԻՄ մասնաճյուղ, ինչը նշանակում է, որ նրանք որպես գործատուներ հիմնականում բավարված են մասնաճյուղում իրականացվող մասնագիտական կրթությունից, հետևաբար նաև՝ մեր կրթական ծրագրերի բովանդակային հուսալիությունից:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Ե. ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտության կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականություն:

2014թ. հոկտեմբերից հիմք ընդունելով ԵՊՀ համապատասխան կարգը մասնաճյուղը ներդրել է կրթական ծրագրերի մոնիթորինգի և վերանայման կարգը (**17.10.2014թ.**) և իր նոր ռազմավարությամբ պլանավորել է վերանայել և գործադրել այդ կարգը (**ՌԾ, գործ. 1.3.2, ժամկետը՝ 09.2019-12.2020**): Նախկին կարգը մասնաճյուղում չի գործարկվել, չնայած պարբերաբար տարբեր մեխանիզմներով կատարվել է կրթական ծրագրերի իրականացման գնահատում և վերանայում:

Կրթական ծրագրեր մշակող կամ վերանայող աշխատանքային խմբերում ներգրավված են նաև արտաքին շահակիցներ՝ գործատուներ (հիմք կազմերը), որոնք ապահովում են կրթական ծրագրերի գործնական և կիրառական իրականացումը, ներկայացնում են աշխատաշուկայի վերլուծություն և առաջարկում նոր դասընթացներ, պրակտիկաների արդյունավետ իրակացման համար նոր ուղղություններ, ավարտական աշխատանքների նոր ժամանակակից և պահանջված թեմաներ:

Օրինակ, մասնաճյուղն արդյունավետ համագործակցում է ՀՀ կենտրոնական բանկի Դիլիջանի ուսումնագիտական կենտրոնի հետ, որի հետ համագործակցության շրջանակներում վերանայվել և արդյունավետ իրականացվում է «Ֆինանսներ (ըստ ոլորտի)» կրթական ծրագիրը, իսկ նրա առաջնակարգ աշխատակիցներից մի քանիսը դասավանդում են մասնաճյուղում: Նրանց հետ համագործակցությամբ բավականին արդյունավետ իրականացվում են նաև ուսանողների արտադրական պրակտիկաները:

«Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» կրթական ծրագրի ուսումնառողների համար կարևոր ձեռքբերում էր համագործակցությունը «Գյումրիի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն» գիտակրթական հիմնադրամի հետ, որը 2019թ.-ի ընթացքում մասնաճյուղի ուսանողների համար իրականացրել է տեխնոլոգիական ոլորտի հատուկ մասնագիտացված կրթական ծրագիր, որը նաև հիմք է հանդիսացել տվյալ կրթական ծրագրի վերանայման համար:

«Զբոսաշրջություն» կրթական ծրագրի արդյունավետ իրականացման համար կարևոր էր համագործակցությունը ՄԱԿ-ի զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակի հետ, որի հետ համատեղ մասնաճյուղում 2017թ.-ին հիմնվել է Տավուշի մարզի տուրիզմի զարգացման և հետազոտական անկախ կենտրոն, որն իր գործընթացների իրականացման համար ներգրավում է մասնաճյուղի ուսանողներին՝ նրանց տալով աշխատանքային պրակտիկայի հնարավորություն, աջակցում է համալսարանի տուրիզմին ուղղված նախաձեռնություններին: Նրանց

նախաձեռնությունները նույնպես հիմք են հանդիսացել «Սերվիս» ծրագրի փոխարեն «Զբոսաշրջություն» կրթական ծրագրի իրականացման և պարբերաբար վերանայման համար:

Մասնաճյուղը համագործակցում է «ՍՈՍ» մանկական գյուղեր և «Հույսի կամուրջ» ՀԿ-ի հետ, որոնք աջակցում են «Հոգեբանություն» կրթական ծրագրի իրականացման գործում:

Օրինակ, որպես կրթական ծրագրերի մշտադիտարկման և գնահատման լավ մեխանիզմ մասնաճյուղում 2014թ. սեպտեմբերից ներդրված են **դասընթացների փաթեթները**՝ պորտֆոլիոները: Դասախոսներն իրենց դասընթացների շրջանակներում իրականացնում են դասընթացի կատարողականի վերլուծություն, գնահատում են դասընթացի ուժեղ և թույլ կողմերը, մշակում բարելավման նոր առաջարկներ՝ հաջորդ ուստարվա համար:

Մշտադիտարկման լավ մեխանիզմ է 2014-15 ուստարվանից մասնաճյուղում հատուկ ձևաչափով ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվությունը, որն ամփոփում է հանձնաժողովի կարծիքը շրջանավարտների ձեռք բերած ուսումնառության ընդհանրական արդյունքների մակարդակի վերաբերյալ, ավարտական աշխատանքների թեմաների, դրանց համապատասխանության և շրջանավարտների կողմից աշխատանքների ներկայացման հմտությունների վերաբերյալ: Այդ հաշվետվության մեջ կարևորվում են կրթական ծրագրի իրականացման վերաբերյալ նրանց առաջարկությունները, որոնք հիմք են հանդիսանում դրանց հետագա բարելավման համար:

Կրթական ծրագրերի վերանայման համար հիմք են հանդիսանում մասնաճյուղում 2011թ.-ից պարբերաբար անցկացվող տարբեր, արդեն առցանց, հարցումների արդյունքները: Այդ արդյունքների և արտաքին ու ներքին շահակիցների կարծիքների վերլուծության միջոցով պարզաբանվում են կրթական ծրագրի արդյունավետությունը, նրա պահանջվածությունը և աշխատաշուկայի պահանջարկին բավարարելը: Դրա վառ օրինակն է աշխատաշուկայում մասնաճյուղի շրջանավարտների բարձր հեղինակությունը և մրցունակությունը, աշխատավայրերում նրանց մասնագիտական որակներից գործատուների բավարարվածությունը (չնայած կան նաև խնդիրներ նրանց գործնական կարողությունների հետ կապված): Դպրոցների մանկավարժները բավարարված են մասնաճյուղի շրջանավարտների և պրակտիկանտ-ուսանողների մասնագիտական պատրաստվածությունից, նրանք գտնում են, որ մեր ուսանողներն ունեն տեսական բարձր գիտելիքներ, սակայն քիչ են տիրապետում դասավանդման ժամանակակից մեթոդների:

Իր ընթացիկ ռազմավարությամբ մասնաճյուղը պլանավորել է իրականացնել կրթական ծրագրերի առցանց գնահատում: Այս գործընթացի իրականացման համար մասնաճյուղն ակնկալում էր ԵՊՀ աջակցությունը, այս ուղղությամբ դեռևս քայլեր չեն ձեռնարկվել, սակայն մասնաճյուղը կրթական ծրագրերի արդյունավետության գնահատման և հետագա բարելավման համար օգտագործում է հարցումների արդյունքները: Իսկ վերջին տարիներին մասնագիտական կրթության որակի ապահովման բաժինը կրթական ծրագրերի պատասխանատուների հետ միասին ավարտական կուրսերի ուսանողների հետ կազմակերպում է հանդիպում-քննարկումներ: Այդ հանդիպումների ժամանակ դիտարկվում են ծրագրի վերջնարդյունքների, դրանց ձևավորման խնդիրների և ընդհանրապես ստացած ուսումնառության որակի վերաբերյալ հարցեր: Նրանց հետաքրքիր առաջարկությունները հավաքագրվում են և կիրառվում են կրթական ծրագրի հերթական վերանայման ժամանակ:

Մշտադիտարկման և գնահատման արդյունքները ներկայացվում են ֆակուլտետների դեկանների և ամբիոնների վարիչների հաշվետվություններում:

Ինչպես նշեցինք, ԵՊՀ ԻՄ-ում կրթական ծրագրերի մշտադիտարկում ըստ կարգի չի իրականացվել, սակայն առկա են ընթացիկ մշտադիտարկման արդյունքներ, որոնք ամրագրված են ամբիոնների նիստերի արձանագրություններում: Վերջին հինգ տարիների ընթացքում կրթական ծրագրերի վերանայման շրջանակներում իրականացված տարբեր ուսումնասիրությունները ցույց են տվել, որ վերանայվել են ուսումնական պլանները, ուսանողների ձեռքբերումների ստուգման և գնահատման ձևերն ու չափանիշները, դասընթացին հատկացված ժամաքանակները, դասընթացների թեմատիկան և այլն: ***Հավելված 3.5-ում*** ներկայացված են կրթական ծրագրերի վերանայման մի քանի արդյունքներ:

Ուժեղ կողմեր (Strengths)	Հնարավորություններ (Opportunities)
1. Տարածաշրջանի աշխատաշուկային ՄԿԾ-ների համապատասխանություն: 2. Մշտադիտարկման, վերանայման գործընթացների կանոնակարգի և պլան–ժամանակացույցի առկայություն: 3. ՄԿԾ-ների համադրելիություն որակավորումների ազգային շրջանակի հետ և կառուցվածքային ու բովանդակային համապատասխանություն ԵՊՀ ՄԿԾ-ների մեթոդական ուղենիշներին: 4. Մասնագիտության կրթական ծրագրի պատասխանատուի ինստիտուտի ներդրում: 5. ՄԿԾ բարելավման, ուսումնական գործընթացների կազմակերպման և կառավարման առաջավոր փորձի համեմատական վերլուծության (բենչմարքինգի) իրականացման քաղաքականության առկայություն: 6. Բոլոր մասնագիտությունների համար «Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագիրք»-երի և «Բակալավրի կրթական ծրագրեր»-ի առկայություն և համապատասխանություն ակնկալվող որակավորումներին: 7. Ուսանողների ուսումնական բեռնվածության արտահայտում ECST կրեդիտներով: 8. Կրթական ծրագրերի՝ ակնկալվող վերջնարդյունքների բավարար մակարդակ կրթական հաջորդ աստիճանի ուսուցման համար: 9. ՄԿԾ-ների պահանջներին համապատասխան պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի առկայություն: 10. Դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականության առկայություն: 11.Դասընթացների փաթեթների կիրառում: 12.Նպատակային պրակտիկաների կազմակերպում:	1. Համագործացություն ԵՊՀ-ի և առաջատար ՄՈՒՀ-երի հետ: 2. Արտաքին շահակիցների մասնակցություն ՄԿԾ-ների մշակման և վերանայման գործընթացներում: 3. ՄԿԾ-ների հրապարակայնություն: 4. Դասավանդման նյութե-րի և ռեսուրսների արդիականացման քաղաքականության մշակում: 5. Շրջանավարտներից և պրակտիկանտ ուսանող-ներից արտաքին շահակից-ների բավարարվածության ուսումնասիրություններ: 6. Դասավանդման որակից և արդյունավետությունից, ուսումնառությունից ուսանողների և շրջանավարտ-ների բավարարվածության ուսումնասիրություններ:
Թույլ կողմեր (Weaknesses)	**Վտանգներ (Threats)**

1. ՄԿԾ-ների համար բենչմարքինգի իրականացման հստակ ընթացակարգերի բացակայություն: **2.** Գնահատման համակարգում ուսանողների հմտությունների և կարողությունների գնահատման մեթոդների անկատարություն: **3. Ա**ռաջատար ՄՈՒՀ-երի հետ ուսանողների և դասավանդող-ների փոխանակման պայմանագրերի բացակայություն: 4. Կրթական ծրագրերի մշակման գործընթացում դասավան-դողների իրազեկվածության և մասնակցության ցածր մակարդակ: 5. Գրագողության դեմ պայքարի արդյունավետ մեթոդների, ակադեմիական ազնվության բավարար մակարդակի ապա-հովման մեխանիզմների անկատարություն: 6. ՄԿԾ-ների մշակման և վերանայման գործընթացներում արտաքին շահակիցների թույլ ներգրավվածություն: 7. ՄԿԾ-ների արդյունավետության գնահատման մեխանիզմ-ների բացակայություն: 8. ՄԿԾ-ների արդյունավետ իրականացման համար անհրա-ժեշտ նյութատեխնիկական բազայի ժամանակակից պահանջ-ներին ոչ լիարժեք համապատասխանություն:	1. Որակավորումների սեկ-տորիալ շրջանակի բացա-կայություն: 2. Մասնագիտության կրթական չափորոշիչների բացակայություն: 3. Դիմորդների թվի նվազում: 4. Տարածաշրջանում PR նյութերի հրապարակման և տարածման սահմանափա-կություն: 5. ՄԿԾ-ների իրականաց-ման և բարելավման համար անհրաժեշտ պետական ֆինանսավորման թույլ աջակցություն: 6. Աշխատաշուկայում պահանջարկի փոփոխու-թյուններով պայմանավոր-ված ՄԿԾ-ների վերանայ-ման արտաքին շահակից-ների թույլ արձագանք:

Ցանկացած ՄՈՒՀ-ի առաքելության իրականացման հիմնական նախապայմանը ՈԱՇ-ի պահանջներին համապատասխան ՄԿԾ-ների առկայությունը, իրականացումը, գնահատումը և բարելավումն է, որի համար մասնաճյուղը նախատեսում է.

- մշակել և ներդնել ՄԿԾ-ների արդյունավետության գնահատման հստակ մեխանիզմներ,
- բարձրացնել ՄԿԾ-ներում կամընտրական դասընթացների չափաբաժնի և պրակտիկաների պլանավորման և իրականացման արդյունավետությունը,
- քայլեր իրականացնել ՄԿԾ-ների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազան ժամանակակից պահանջներին համապատասխանեցնելու համար,
- մշակել և ներդրել դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն,
- բարելավել գնահատման համակարգում ուսանողների հմտությունների և կարողությունների գնահատման մեթոդները,
- դասավանդողների համար կազմակերպել կրթական ծրագրերի մշակման գործընթացին վերաբերող վերապատրաստումներ,
- կիրարկել գրագողության դեմ պայքարի նախատեսված մեթոդները, մշակել գրագողության դեմ պայքարի արդյունավետ մեթոդների, ակադեմիական ազնվության բավարար մակարդակի ապահովման նոր մեխանիզմներ,
- համագործակցել առաջատար ՄՈՒՀ-երի հետ՝ ուսանողների և դասավանդողների փոխանակման նպատակով,
- մշակել և ներդրել արտաքին և ներքին շահակիցների կրթական պահանջմունքների ուսումնասիրման նոր արդյունավետ մեխանիզմներ,
- համակարգել հարցումների արդյունքների մշակումը: